

**Տ. ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՆԱԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ  
(20 մայիսի 2004 թ.)**

*«Առաքեա, Տէր, գոյս Քո եւ զճշմարտութիւն  
Քո, զի առաջնորդեացեն ինձ, եւ հանցեն  
զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս Քո»:  
(Սաղմ. ԽԲ 3)*

Սիրելի հավաքացյալներ,

Ամեն անգամ Ս. Պարարագին երբ Պարարգիչ քահանան պիտի բարձրանա Սուրբ Խորան, աղոթում է սաղմոսերգուի այս բառերով:

Եվ այսօր՝ Նամբարձման այս հրաշալի առավոտ, երբ մեր բոլոր եկեղեցիներում Սուրբ Պարարագ է մարտոցվում, կրկին ու կրկին հայոց խորաններից հնչում են մարգարեական այս բառերը՝ խառնվելով հավաքացյալների մշտամրմունջ աղոթքներին. «Առաքեա, Տէր, գոյս Քո եւ զճշմարտութիւն Քո, զի առաջնորդեացեն ինձ, հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս Քո»:

Կենաց աննվազ լույսը և բացարձակ ճշմարտությունը՝ Նիսուս Քրիստոս, մեղքի և մահվան կապանքները ջախջախելուց հետո այսօր վերջացնում է Իր երկրային փրօթիկական կյանքը, հրաժեշտ է փայլի Իր աշակերտներին և երկնքի մեջ միանում Ամենագոր Աստուծուն: Մեզ՝ հավաքացյալներիս համար աներկբայելի իրողություն է, որ մեր Փրկիչը բաժանվելով մեզանից մարմնով՝ մշտնջենապես մեզ հետ է հոգով, ինչպես որ ասաց. «Ահավասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն առօրս՝ մինչև ի կապարած աշխարհի» (Մատթ. ԻԸ 20) և Իր կենսաբարձ ճշմարտության ճառագայթները հանապազ լուսավորում են մեր կյանքի ուղին:

Եվ այսօր, Նամբարձման այս հիեզարթի, երբ մեզանից յուրաքանչյուրը Նիսուս Քրիստոսի ձեռքը բռնած բարձրանում է Չիթենյաց լեռը՝ փեսնելու համար Նրաշափառ Նամբարձման աստվածառաք հրաշքը, ակամայից մտածում է լեռան մասին, թե ո՞րն է այդ Չիթենյաց լեռը, որտեղ է, որ մեր օրերում պիտի ակնարկեսը լինենք Նամբարձման հրաշքին, և վերջապես՝ ո՞րն է այդ համբարձման հրաշքը մեր օրերում, դարերի խորքից այն ինչ է մեզ փայլիս այսօր:

Նիրավի, Նիսուս Քրիստոսի կյանքի մի քանի կարևոր հանգրվաններ կապված են լեռների հետ, ինչպես, օրինակ, անապատի երկրորդ փորձությունը, երբ սապանան մի բարձր լեռան գագաթ բարձրացնելով փորձում է Տիրոջը՝ ցույց տալով աշխարհի փառքը, Լեռան քարոզը, Պայծառակերպությունը, Նիսուսի աղոթքները լեռան գագաթին, Խաչելությունը Գագաթ կոչված վայրում, և վերջապես՝ Նրաշափառ Նամբարձումը:

Այս ամենի մեջ Տիտու ցույց է փայլիս մարդկային կյանքը, նմանօրինակ մի պարկեր: Այն է՝ մարդու ողջ կյանքը մի հարարև ընթացք է դեպ լեռան գագաթը: Երբ Տերն ասում էր, որ եթե «մանանեխի հափիկի չափ հավարք ունենաք, կարող եք լեռներ շարժել» (հմմտ. Մատթ. ԺԷ 19), միթե սա գիտակցված և զորեղ հավարքի միջոցով սեփական կյանքը և ավելին՝ մարդկանց կյանքերը վերափոխելու երանության մասին չէ, և կամ էլ, խոսելով վերջին օրերի մասին, Տիտու երբ ասում էր, թե այդ օրը շար-շարեր պիտի ասեն լեռներին՝ ընկնե՞մ մեզ վրա (հմմտ. Ղուկ. ԻԳ 30), միթե սա այն մարդիկ չեն, ովքեր իրենց ողջ կյանքն իբրև մի ունայնություն և խավար ապրեցին՝ նման ստոր և անշունչ լեռների: Այո՛, Վերջին դարաստանի օրը նրանք իրենց իսկ մեղավոր կյանքի փշերով պսակված ծանր դառնության փակ պիտի գտնեն իրենց անփառունակ վախճանը:

Միրելիներ, մարդկային կյանքը ցավալիտրեն շար հաճախ նման է սիզիֆյան աշխատանքի: Միզիփոսը, մեզ քաջ հայրնի հին հունական դիցաբանությունից, ենթարկվել էր աստվածների պատժին և դարապարզվել հսկայական ժայռի մի մեծ քարաբեկոր բարձրացնելու լեռան գագաթը: Իսկ այդ քարաբեկորը բարձրացնելուն պես վայր էր ընկնում, և Միզիփոսը նորից ու նորից պետք է բարձրացներ այն: Այսպես և մեր օրերում է: Շար մարդիկ առանց Աստվածային լույսի և ճշմարտության փորձում են բարձրանալ կյանքի լեռը, այն է՝ առանց Քրիստոսի և Նրա կենսագործող պարվիրանների չգիտեն, թե ինչի՛ համար են ապրում ու փանջվում, կյանքի ծանր լուծը ունենին չգիտեն, ու՛ր են գնում խավարի մեջ. կյանքի անիմաստ գոյություն և հոգեմրավոր փառապանք:

Միթե մարդ կարող է առանց Քրիստոսի դուրս պրծնել սարանայի փորձության ճիրաններից, ով գայթակղեցնում է աշխարհի ունայն փառքով, թող թե ապրել երջանիկ և երանելի կյանք՝ առանց Քրիստոսավանդ Լեռան քարոզի կենարար պարվիրանների:

Միթե մարդ կարող է քայլել կյանքի խավար բավիղներով՝ առանց աղոթքի կենարար լույսի, թող թե պայծառակերպված աստվածահաճո կյանք ապրել՝ առանց Թարոր լեռան հրաշքի:

Եվ, վերջապես, միթե մարդ կարող է հասկանալ նվիրումի և ինքնագոհաբերության խորհուրդը՝ առանց Տիտու Քրիստոսի խաչելության, թող թե միայնակ բարձրանալ Ջիթենյաց լեռը՝ համբարձվելու համար:

Թերևս ձեզանից շարերը հարց փան՝ արդյո՞ք հնարավոր չէ այս կյանքն ապրել բարոյական չափանիշներով, բարի կյանք վարել՝ երջանիկ ու խաղաղ, սակայն առանց Քրիստոսի և բրիստոնության:

Միրելիներս, ինչպես ասացի, կյանքը նման է լեռան բարձունքի, որին ձգվում են բոլորը: Առանց Քրիստոսի թերևս ո՞մանք մեծ դժվարությամբ և փառապանքով կարողանան հասնել այնտեղ, սակայն չեն դիմանա այդ լեռան բարձունքի սառնությունը և սուր օդին, ավելին՝ գագաթից այն կողմ դեպի երկինք թռչելու համար թևեր են պետք:

Նամբարձման օրն ավանդաբար մեր Եկեղեցին կարարում է Հայոց Հայրապետական Աթոռի՝ Կիլիկիայի Միս մայրաքաղաքից Ս. Էջմիածնում վերահաստատման փոնը: Հայրապետական Մայր Աթոռը երկարարև դեգերումներից հեփո, 1441 թ., վերջնականապես հանգրվանեց իր Միածնաէջ սրբավայրում, որտեղ և հաստատվել էր Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից: Մեր Հայրապետները թեն պատմության ծանր պայմանների թելադրանքով քրե-

ղափոխվել են զանազան վայրեր՝ Դվին, Անի, Նոռմկլա, Արգինա, Միս, սակայն աստվածահրաշ Միաձևաէջ վայրն այս երբևք չի փոխվել:

Ահա սա է մեր հավաքքի Ձիթենյաց լեռը, երկրի և երկնքի հանդիպման վայրը, որտեղ ամեն մի հայորդի յուրովի է ապրում իր Նամբարձման Նրաշքը, և որն իր ամեն մի քարի րակ, բանաստեղծի իսկ վկայությամբ՝ «ղեպի երկինք բարձրացող գաղտնի ճամբա մը ունի»: Դարեր շարունակ պատմության հոլովություն մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր մայրական հոգածության մեջ է պահել իր գավակներին, դժվար և ծանր պահերին իր ծիրանին ու բեհեզը պատռել՝ վիրակապելու համար հայ ժողովրդի գավակաց արյունաքամ վերքերը:

Այս պահին, երբ Նայրապետական մաղթանք պեպք է կատարենք, մեզանից յուրաքանչյուրիս որդիական ամենաջերմ սիրո աղոթքն է առ Աստված. «Բարեխոսությամբ վերին Քո գորաց, Տէր, միշտ անշարժ պահեա գԱթոռ Նայկազնեաց» և երկար կյանք րոր մեր ազգընտիր Գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Նայրապետին, Ով այս օրերին Նովապետական այցով գրնվում է Նարավային Ամերիկայի Իր հավաքավոր գավակների ուրախության մեջ, և Նորին Սրբության գավազանը միշտ ծաղկյալ պահի հայոց երկնակամարում:

Նավարք մեր մրածումների, սիրելիների, Նայոց Ձիթենյաց լեռան այս գագաթին Նամբարձման Նրաշքին վկա մեր երանելի Նայրապետների բարեխոսությամբ վստահ կերպով մեր քայլերն ուղղենք դեպի երկինք րանող գաղտնի ճամփաները՝ հանապազ աղոթելով. «Առաքեա, Տէր, զյոյս քո և զճշմարտութիւն քո» այժմ և հավեր. ամեն: